ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«Տեխնոլոգիա 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Տեխնոլոգիա 3» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար /Օրդյան Ն. Ա., Օհանյան Հ. Վ., Պետրոսյան Ս. Ս.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 20 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.

Հեղինակներ՝
Օրդյան Նունե Ալբերտի, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օհանյան Հասմիկ Վրույրի
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի

Խմբագիր՝ Սարգսյան Հ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ., Դավթյան Հ. Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարնի «Տեխնոլոգիա 3» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 5

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 19

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է «Տեխնոլոգիա 3» աշխատանքային գիրք-տետրին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի 3-րդ դասարանի աշխատանքային գիրք-տետրի տրամաբանությանը, ընդգրկում են դասընթացի բոլոր թեմաները և կարող են իրականացվել սովորողների կողմից ինչպես ուսուցչի ուղղորդմամբ կամ աջակցությամբ, այնպես էլ՝ ինքնուրույն: Այս աշխատանքային գիրք-տետրը սովորողներին հնարավորություն կընձեռի ավելի լավ հասկանալ, կրկնել և ամրապնդել դասընթացի նյութը, փորձել սեփական ուժերն ինչպես պարզ, այնպես էլ ավելի բարդ առաջադրանքներ կատարելիս: Առաջադրանքները կառուցված են այնպես, որ լավագույնս արձագանքեն տարբեր առանձնահատկություններ ունեցող սովորողների կրթական կարիքներին:

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Ներածական դաս:

Առաջին դասին ուսուցիչը ներկայացնում է 3-րդ դասարանի տեխնոլոգիայի դասերին կիրառվող նյութերը, գործիքներն ու պիտույքները, որոնց նկարները բերված են 2-րդ էջում: Նա թվարկում է նկարում պատկերված իրերի անունները և բացատրում, թե դրանք ինչպես կարող են գործածվել տեխնոլոգիայի դասերին: Հաջորդ էջում պատկերված են «Տեխնոլոգիա» գիրք-տետրում կիրառված պայմանական նշանները:

Առաջադրանք 1. Հավելվածից ընտրի՛ր ««համապատասխան հագուստ»» և «հագցրու» երեխաներին (Հավելված 1):

ա) Տարվա տարբեր եղանակներին:

բ) Տանը կամ դպրոցում:

Այս առաջադրանքի նպատակն է երեխաների մոտ ձևավորել որոշակի գիտելիքներ հագուստի տարբեր տեսակների և հագուստին ներկայացվող պահանջների վերաբերյալ: Ուսուցիչը կարող է հարցերի օգնությամբ պարզաբանել երեխաների գիտելիքներն այն մասին, թե տարվա տարբեր եղանակներին ինչպիսի հագուստ է հագնում մարդը: Նա բացատրում է հագուստի նշանակությունը մարդու համար. «Երեխաներ, հագուստը մարդուն անհրաժեշտ կարևոր իրերից է: Այն պաշտպանում է մարդու մարմինը ցրտից, շոգից և խոնավությունից: Կախված եղանակային տարբեր պայմաններից՝ մարդն ընտրում է համապատասխան հագուստ: Բացի դրանից, հագուստն ունի գեղագիտական նշանակություն: Այն կարող է նախատեսված լինել դպրոցի, աշխատավայրի կամ տան համար: Հավելված 1-ում դուք

տեսնում եք հագուստի տարբեր տեսակներ: Ընտրե՛ք տարվա տարբեր եղանակներին համապատասխան հագուստը և «հագցրե՛ք» երեխաներին»:

Այս առաջադրանքը զարգացնում է տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը, դիտողականությունը, ինչպես նաև տարվա տարբեր եղանակներին համապատասխան հագուստ ընտրելու և համապատասխան վարք դրսևորելու հմտությունները: Դժվարությունների դեպքում կարելի է տալ հուշող հարցեր կամ մատնացույց անել ճիշտ հագուստը:

Առաջադրանք 2. Աշխատանք մանածագործական նյութերով:

ա) Մի կտոր բամբակ ոլորելով՝ պատրաստի՛ր բամբակյա թել:

բ) Մի քանի թելեր միմյանց հետ ոլորելով՝ պատրաստի՛ր ավելի հաստ թել:

գ) Ընկերոջդ հետ 2 թել ոլորելով ստացիր հաստ թել:

դ) 3 թելից հյուսի՛ր պարան:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մատների մկանները: Այն նպաստում է նաև մանածագործական նյութերի մասին գիտելիքների ամրապնդմանը:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ բամբակ և տարբեր հաստության թելեր: Եթե սովորողը դժվարանա կատարել առաջադրանքը, կարելի է խոսքային և ֆիզիկական հուշումներ կիրառել: Մանր շարժունակության դժվարություն ունեցող սովորողների համար կարելի է օգտագործել հաստ թելեր:

Առաջադրանք 3. Գործվածքի հատկությունները:

Որոշի՛ր գործվածքի շիտակ և թարս կողմերը: Նայի՛ր նկարում պատկերված գործվածքի կտորներին և նշի՛ր շիտակ կողմը:

Սա հետազոտական աշխատանք է, որի նպատակն է գործվածքի հատկությունների վերաբերյալ գիտելիքների ձևավորումը: Նկարում բերված են տարբեր գործվածքների շիտակ և թարս կողմերը: Սովորողը, նկարներին նայելով, պետք է որոշի շիտակ կողմը և մատիտով կամ գրչով համապատասխան նշում կատարի: Առաջադրանքը նպաստում է ուշադրության և տեսողական ընկալման զարգացմանը:

Առաջադրանք 4. Օրիգամի:

ա) Եռանկյուն

բ) Օդապարիկ

գ) Ծաղկի կոկոն (բողբոջ)

դ) Ծրար

Սա նախորդ տարվա (2-րդ դասարանի) նմանատիպ առաջադրանքի ավելի բարդ տարբերակն է, որի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության և տրամաբանության զարգացմանը: Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ քառակուսի կտրված գունավոր թղթեր: Սովորողը, նկարներով ուղղորդվելով, ծալում է այդ թղթերը: Առաջադրանքը նպաստում է նաև տարածական պատկերացման զարգացմանը: Անհրաժեշտության դեպքում կարելի է մի քանի անգամ կրկնել քայլերի հաջորդականությունը, ֆիզիկապես ուղղորդել կամ ավելի շատ ժամանակ տրամադրել:

Առաջադրանք 5. Օրիգամի էջանշան:

Նկարում նշված հաջորդականությամբ պատրաստի՛ր օրիգամի էջանշան: Պատրաստի էջանշանը ձևավորի՛ր քո նախընտրած ձևով՝ օգտվելով հավելվածից (Հավելված 2):

Այս առաջադրանքը կատարելու համար ևս հարկ է ունենալ քառակուսի կտրված գունավոր թղթեր: Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ պատրաստվում է էջանշան, որը կարելի է տարբեր կենդանիների պատկերների նմանությամբ ձևավորել՝ օգտվելով հավելվածի նկարներից:

Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում երևակայությունը, ստեղծագործական ունակությունները: Եթե երեխան դժվարանա կատարել առաջադրանքը, կարելի է մի քանի անգամ հուշել հերթականությունը:

Առաջադրանք 6. Հավելվածից օգտվելով՝ պատրաստի՛ր նկարում պատկերված ապլիկացիան (Հավելված 3): Ի՞նչ երկրաչափական պատկերներից է այն պատրաստված: Վանդակներում նշի՛ր, թե յուրաքանչյուր պատկերից քանի՞ հատ կա:

Այս առաջադրանքը կատարվում է հավելվածի կպչուն գունավոր երկրաչափական պատկերներով: Ըստ բերված պատկերի՝ հարկավոր է հավաքել շոգեքարշի նկարը, այնուհետև հաշվել, թե յուրաքանչյուր երկրաչափական պատկերից քանիսն օգտագործվեց նկարը ստանալու համար: Առաջադրանքը զարգացնում է տրամաբանությունը, ինչպես նաև մանր մկանների շարժունակությունը և ուշադրությունը: Այս առաջադրանքը կատարելիս անհրաժեշտության դեպքում կարելի է հուշել պատկերների հաջորդականությունը:

Առաջադրանք 7. Գունավոր թղթերից կտրի՛ր շրջաններ, պատրաստի՛ր թղթից ձկնիկներ, հաջորդ էջին պատկերված օվկիանոսի ետնապատկերին հավաքի՛ր կոմպոզիցիան, ինչպես ցույց է տրված նկարում:

Առաջադրանքի կատարման համար նախ անհրաժեշտ է մկրատով եզրագծով կտրել գիրք-տետրի հաջորդ էջում բերված գունավոր շրջանները: Դրանք ծալվում են գծով նշված տեղից և ուղեցույցում բերված հաջորդականությամբ սոսնձվում օվկիանոսի ետնապատկերին: Վերջում կարելի է մատիտներով ավելացնել թեփուկներ և այլ մանրամասներ:

Առաջադրանք 8. Քայլերի նշված հաջորդականությամբ թղթից պատրաստի՛ր տարածական մրգեր (Հավելված 4):

Այս աշխատանքի կատարման համար սովորողն օգտագործում է գունավոր թղթեր և հավելվածի կպչուն նկարները: Հավելվածի ձևանմուշները փակցվում են համապատասխան գույնի թղթի վրա, ապա մկրատով եզրագծով կտրվում: Նշված մասերից ծալելով՝ ստացվում են տարածական մրգեր: Դրանց վրա հավելվածից բերվում և ամրացվում են տերևներ և պոչ:

Այս առաջադրանքը զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը և տրամաբանությունը: Եթե երեխան դժվարանա ամբողջովին ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա կարելի է ներգրավել դասընկերոջը, ով մկրատով կկտրի պատկերները:

Առաջադրանք 9. Նայի՛ր օրինակին և գունավոր թղթերից պատրաստի՛ր հավիկ:

Այս առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ գունավոր թուղթ, մատիտ, մկրատ, սոսինձ և որևէ շրջանաձև իր (օրինակ՝ թղթե բաժակ), որի օգնությամբ կարելի է թղթի վրա շրջան գծել:

Պատրաստման հաջորդական քայլերը բերված են գիրք-տետրի բացատրական մասում:

Առաջադրանքը ավելի հեշտացնելու և հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչը կարող է ընդգրկել դասարանի մյուս աշակերտներին:

Այս առաջադրանքի նպատակն է զարգացնել ուշադրությունը, պատկերացումը, ստեղծագործական ունակությունները: Այն զարգացնում է նաև երեխաների մատների մանր շարժունակությունը, ձևավորում տարրական աշխատանքային հմտություններ:

Առաջադրանք 10. Գունավոր թղթերից պատրաստի՛ր խխունջներ:

Այս առաջադրանքը կատարվում է գունավոր թղթերով, անհրաժեշտ է ունենալ նաև քանոն, մատիտ, մկրատ և սոսինձ: Քայլերի կատարման մանրամասն հաջորդականությունը բերված է բացատրական մասում: Սովորողը պետք է քանոնի և մատիտի օգնությամբ գունավոր թղթերի վրա գծի՝ 4 տարբեր չափերի ժապավեններ՝ 12 սմ, 10 սմ, 8 սմ, 6 սմ երկարությամբ, և դրանք մկրատով կտրի: Ամենաերկար ժապավենի մի ծայրը նկարում նշված ձևով սոսնձելով՝ ձևավորվում է խխունջի գլուխը, որը կարելի է դնել մի կողմ, իսկ մյուս երեք ժապավենները մեծից փոքր մի կողմից սոսնձվում են միմյանց: Դրանից հետո սոսնձված թղթե ժապավենները ազատ կողմից հերթով շրջանաձև պտտելով՝ սոսնձում են մի կետում՝ ստանալով խխունջի պատյանը, որը սոսնձվում է մարմնի վրա:

Եթե սովորողը դժվարանա կատարել այս առաջադրանքը, ուսուցիչը կարող է ընդգրկել դասարանի մյուս աշակերտներին ևս: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան կարող է կատարել այն գործողությունները, որոնք իր համար դժվար չեն:

Այս առաջադրանքի նպատակն է զարգացնել ուշադրությունը, պատկերացումը, ստեղծագործական ունակությունները: Այն զարգացնում է նաև երեխաների մատների մանր շարժունակությունը, ձևավորում տարրական աշխատանքային հմտություններ:

Առաջադրանք 11. Գունավոր թղթերից պատրաստի՛ր օձ-շղթա:

Այս առաջադրանքը որոշ չափով նման է նախորդին: Այս դեպքում ևս անհրաժեշտ է ունենալ գունավոր թղթեր, քանոն, մատիտ, մկրատ և սոսինձ:

Քայլերի կատարման մանրամասն հաջորդականությունը բերված է բացատրական մասում: Սովորողը պետք է քանոնի և մատիտի օգնությամբ կանաչ թղթի վրա 10 սմ երկարությամբ և 2 սմ լայնությամբ ժապավեններ գծի (նկարի օրինակում դրանք 6-ն են) և դրանք մկրատով կտրի: Առաջին ժապավենի երկու եզրերը սոսնձելով միմյանց՝ ստացվում է օղակ: Հաջորդ ժապավենը անցկացվում է օղակի միջով, ապա երկու եզրերը սոսնձով ամրացվում են: Այսպես հերթով ստացվում են բոլոր օղակները: Պատրաստի շղթայի մի կողմում ամրացվում է գլուխը, իսկ մյուս կողմում՝ պոչը: Կարմիր թղթից կտրվում է օձի «լեզուն» և սոսնձվում գլխին:

Առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգով: Դասընկերները կարող են քանոնով և մկրատով կատարվելիք աշխատանքները բաժանել միմյանց մեջ: Հնարավորության դեպքում կարելի է կիրառել հարմարեցված մկրատ և քանոն:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մատների մկանները:

Առաջադրանք 12. «Ո՞վ որտե՞ղ է ապրում»: Գունավոր մատիտներով ներկի՛ր բնության տարբեր վայրերի նկարները, հավելվածից ընտրի՛ր կենդանիների պատկերները և տեղադրի՛ր համապատասխան վայրում (Հավելված 5):

Այս առաջադրանքը հարկ է կատարել գունավոր մատիտներով և հավելվածից բերվող կպչուն նկարներով: Այն զարգացնում է սովորողի գիտելիքները բնության և կենդանական աշխարհի վերաբերյալ, ստեղծում միջառարկայական կապ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հետ: Գիրք-տետրում գծանկարով պատկերված են բնության տարբեր պատկերներ, որոնց վերևում գրված է համապատասխան անվանումը՝ «Անտառ», «Անապատ», «Ճահիճ», «Օվկիանոս»: Հավելվածում կան կենդանիների ինքնակպչուն պատկերներ՝ արջ, ուղտ, գորտ և ձուկ: Սովորողը նախ պետք է գունավոր մատիտներով ներկի նկարները, ապա հավելվածից մկրատով կտրի համապատասխան կենդանիների պատկերները և կպչուն մասով ամրացնի ճիշտ տեղում:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մատների մկանները:

Առաջադրանք 13. Պատրաստի՛ր ամանորյա տարածական դեկոր քայլերի նշված հաջորդականությամբ:

Այս առաջադրանքի կատարման համար հարկավոր է մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ և մի քիչ բամբակ: Դեկորի հիմքը բերված է գիրք-տետրում: Սկզբում մկրատի օգնությամբ պետք է

եզրագծով կտրել պատկերը, ապա գունավոր մատիտներով կամ ներկերով ներկել այն: Պատկերի վրա համապատասխան պայմանական նշաններով նշված են ծալվող և սոսնձվող հատվածները: Քայլերի մանրամասն հաջորդականությունը բերված է առաջադրանքի բացատրական մասում: Վերջում պատրաստի դեկորը ձևավորվում է բամբակով:

Այս առաջադրանքը զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առաջադրանք 14. Նայի՛ր արձանների նկարներին և գծով միացրո՛ւ այն նյութի անվանը, որից դրանք պատրաստվել են:

Սա ճանաչողական բնույթի աշխատանք է, նպաստում է սովորողների մոտ տարբեր նյութերի մասին գիտելիքների ձևավորմանը: Սովորողների համար առաջադրանքն ավելի պարզեցնելու նպատակով յուրաքանչյուր նյութի անվան մոտ բերված է հուշող նկար: Առաջադրանքը նպաստում է տրամաբանական մտածողության, ուշադրության և դիտողականության զարգացմանը:

Առաջադրանք 15. Ծեփոնից պատրաստի՛ր կարապներ նշված հաջորդականությամբ:

Առաջադրանքի կատարման համար հարկավոր է ծեփոն: Կատարման հաջորդականությունը մանրամասն բերված է տետրում: Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ: Դժվարությունների դեպքում կարելի է մի քանի անգամ ցուցադրել գործընթացը:

Առաջադրանք 16. Ծեփոնից և բնական նյութերից պատրաստի՛ր տարբեր կենդանիներ կամ այլ հետաքրքիր իրեր: Կարող ես օգտվել նկարում բերված օրինակից:

Այս առաջադրանքը կատարվում է ծեփոնով և սերմերով: Բերված օրինակի համար օգտագործվել են արևածաղկի սերմեր: Կարելի է աշխատել զույգերով. դասընկերներից մեկը կարող է ծեփոնից պատրաստել ոզնու մարմինը, իսկ մյուսը՝ արևածաղկի սերմերն ամրացնել ոզնու մարմնին:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ: Այն նպաստում է նաև ստեղծագործական երևակայության զարգացմանը: Իսկ զույգերով աշխատանքը կնպաստի երեխայի մոտ համագործակցային հմտությունների ձևավորմանը:

Առաջադրանք 17. Ծեփոնից պատրաստի՛ր երկար պարաններ, այնուհետև դրանցից ձևավորի՛ր կենդանիներ կամ մրգեր: Կարող ես օգտվել նկարներից կամ հորինել որևէ այլ բան քո երևակայությամբ:

Քո պատրաստած պատկերները կարող ես տեղադրել դասարանի «Մեր ստեղծագործությունները» անկյունում:

Այս առաջադրանքը կատարվում է ծեփոնով: Առաջադրանքի կատարման համար բերված են մի քանի օրինակներ, իսկ հաջորդ էջում՝ 2 պարզ օրինակների սխեմատիկ պատկերներ: Աշխատանքը ավարտուն վիճակում ծավալուն է լինելու, որի համար անհրաժեշտ է նախօրոք մկրատով կտրել էջը: Պատրաստի աշխատանքները կարելի է պահել սովորողի անհատական թղթապանակում:

Ծեփոնի կտորները սեղանի վրա գլորելով՝ երեխան պատրաստում է երկար ձողեր, որոնք գիրք-տետրի սխեմատիկ

պատկերի վրա ամրացնելով՝ ստանում է թիթեռի և բալի պատկերներ: Առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգով: Երեխաներից մեկը կարող է ծեփոնից բարակ ձողերը գլորել, իսկ մյուսը՝ ձևավորել պատկերները: Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը:

Առաջադրանք 18. Գունավոր ծեփոնների օգնությամբ ձևավորի՛ր նկարված թխվածքները:

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ գունավոր ծեփոններ: Տետրում բերված են թխվածքների նկարներ, որոնց վրա մատներով քսելով ծեփոնը՝ սովորողը պետք է ստանա գեղեցիկ ձևավորված թխվածքներ:

Աշխատանքը ավարտուն վիճակում ծավալուն է լինելու, որի համար անհրաժեշտ է նախօրոք մկրատով կտրել էջը:

Առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել ստեղծագործական կարողությունները և երևակայությունը:

Առաջադրանք 19. Թղթե ափսեի վրա ասեղի օգնությամբ թելից ծով պատրաստիր և այնտեղ տեղադրի՛ր տարբեր ջրային կենդանիների (Հավելված 6):

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ մեկանգամյա օգտագործման թղթե ափսե, կապույտ կամ երկնագույն հաստ թել, մեծ ասեղ: Նկարի օրինակով պետք է թղթե ափսեի ներքևի հատվածը թելերով «լցնել», որպեսզի հնարավոր լինի այնտեղ տեղադրել տարբեր ծովային կենդանիների: Իսկ հավելվածից բերվող

կենդանիների պատկերները հարկ է ամրացնել հաստ թղթի կամ ստվարաթղթի վրա և եզրագծով կտրել մկրատով:

Եթե երեխան դժվարանա աշխատել մկրատով և ասեղով, ապա առաջադրանքը կարելի է կազմակերպել զույգով: Սովորողը կարող է հավելվածի պատկերներն ամրացնել թղթի վրա, իսկ դասընկերը՝ մկրատով կտրել եզրագիծը:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել սովորողների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնել տրամաբանական մտածողությունն ու երևակայությունը:

Առաջադրանք 20. Խճանկար:

Պատրաստի՛ր խճանկար հյութ խմելու ձողիկներից՝ դրանք ծեփոնով ամրացնելով նկարին:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ հյութ խմելու տարբեր գույնի ձողիկներ և ծեփոններ: Նախընտրելի է, որ ծեփոններն ու ձողիկները միևնույն գույնի լինեն: Այս աշխատանքը ևս ավարտուն վիճակում ծավալուն է լինելու, որի համար անհրաժեշտ է նախօրոք մկրատով կտրել էջը:

Սկզբում պետք է հյութ խմելու ձողիկները մկրատով մանր կտրատել: Առաջադրանքի այս հատվածը կարող է կատարել դժվարություն ունեցող սովորողի դասընկերը:

Սովորողը մատներով ծեփոնապատում է նկարը՝ ընտրելով համապատասխան գույներ: Այնուհետև դասընկերները միասին պետք է ձողիկների մանր կտորները սեղմելով ամրացնեն ծեփոնով «ներկված» մասերին:

Այս առաջադրանքը ձևավորում է տարբեր նյութերով աշխատելու հմտություններ: Այն զարգացնում է ստեղծագործական

ունակությունները, երևակայությունը, գեղագիտական ճաշակը: Վարժությունը ձևավորում է նաև համագործակցային և սոցիալական հմտություններ:

Առաջադրանք 21. Պատրաստի՛ր թռչնաբույն և ամրացրու ծառի վրա (Հավելված 7):

Առաջադրանքը կատարելու համար հարկ է մկրատով կտրել գիրք-տետրի հաջորդ երկու էջերը: Աշխատանքը հավաքվում է ծառի պատկերի վրա: Հարկավոր է մկրատով կտրել թռչնաբնի հիմքերի պատկերները և բերված հաջորդականությամբ պատրաստել թռչնաբույն: Սովորողը դրանք սոսնձով ամրացնում է ծառի վրա, ապա հավելվածից բերում թռչունների պատկերները և տեղադրում տարբեր մասերում:

Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում երևակայությունը, ստեղծագործական ունակությունները: Եթե երեխան դժվարանա կատարել առաջադրանքը, կարելի է մի քանի անգամ հուշել հերթականությունը:

Բնակարանի ինտերիերի ձևավորում

Առաջադրանք 22. Եզրագծերով կտրի՛ր հաջորդ 4 էջերում պատկերված տարբեր սենյակների պատկերները, հավելվածից ընտրի՛ր համապատասխան կահույքը և տեղադրի՛ր ճիշտ տեղերում: Կահավորված սենյակների պատկերները ծալի՛ր նշված տեղից, սոսնձով միմյանց ամրացրու նշված եզրերը, դրանց օգնությամբ հավաքի՛ր բնակարան (Հավելված 8):

Առաջադրանքը կատարվում է գիրք-տետրի էջերում բերված պատկերներով, որոնք հարկավոր է եզրագծերով կտրել մկրատով, ապա դրանց համապատասխան մասերում ամրացնել հավելվածից բերված կահույքի պատկերները, ծալել և սոսնձելով ստանալ 4 տարբեր սենյակների տարածական պատկերներ: Դրանք միմյանց սոսնձելով կարելի է ստանալ տան ամբողջական պատկերը:

Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում տրամաբանությունը, երևակայությունը, ստեղծագործական ունակությունները: Եթե երեխան դժվարանա ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա որոշ գործողություններ կարող է կատարել դասընկերների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեխնոլոգիա: Դասագիրք 3-րդ դասարանի համար/ Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, Եր.: Տիգրան Մեծ, 2024.-84 էջ:
2. Տեխնոլոգիա 3-րդ դասարան, մեթոդական ուղեցույց/ Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, «Տիգրան Մեծ», 2024 թ., 71 էջ:
3. Технология. 3 класс: учебник/ Н.М. Конышева.-Смоленск: Ассоциация 21 век, 2016.- 173 стр.
4. Технология. Ручной труд. 3 класс: учеб. для общеобразоват. организаций, реализующих адапт. основные общеобразоват. программы / Л. А. Кузнецова. - М. : Просвещение, 2016. - 110 с.
5. Технология. Ручной труд. Методические рекомендации. 1-4 классы: учеб. пособие для общеобразоват. организаций, реализующих адапт. основные общеобразоват. программы / Л. А. Кузнецова. - М.: Просвещение, 2016. - 366 с.

Օրդյան Ն.Ա., Օհանյան Հ.Վ., Պետրոսյան Ս.Ս.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43